

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1

ՅՈՒՆՈՒԱՐ

ԿԱ. ՏԱՐԻ 1947

Ս. ՍԵՀԵՍԻ ՎԵՐԵԳՐՈՒՄԻ ԿԵՆՈՆՆԵՐԸ ՄԵՏԵՆԵԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹԻՆ

(Շարունակութիւն):

8. Յիշեցինք վերադոյն, թէ Հեղինակս օգտուած է Գաւառական Ժողովներու Կանոններէն եւ Առաքելոց Վարդապետութենէն, թարգմանուած հինգերորդ դարուն: Այսպէս կ'օգտուի Լաւողիկէի Ժողովոյն ԺԸ. Կանոնէն. «Պաշտօն սաղմոսերգութեան անխափան կացցէ, ի տուրնջեան եւ ի դիշերի»²⁶, ըստ օրինակի մայրաքաղաքաց [Տօփուապետին], զի ամենայն ումեք չէ օրէն եւ իշխանութիւն յապաղել զայն կարգ պաշտաման կամ նորաձեւութիւնս ինչ առնել, այլ միշտ ի նմին յարանալ (էջ 81—82):

Լաւողիկէի ԺԸ. Կանոնն է. «Զի զնոյն ինքն զպաշտօն աղօթիցն յամենայն ժամ եւ յերկորին արժան է կատարել»: Յոյն բնագիրը այսպէս կը կարգայ. «Պարտ է զնոյն պաշտօն աղօթից յամենայն ժամ եւ յիններորդ ժամու եւ յերեկորին կատարել»:

Ա. հատուածի մէջ կ'ըսուի. «Այցելու եւ հասարակաց հայր է եպիսկոպոս... տեսուչս եւ առաջնորդս գաւառաց եւ գիւղից կացուցանելով, որք անուանին բորեպիսկոպոս» (էջ 71): Ընդ զձուած տողերս յաւելուած են, հաւանօրէն նոյն այն ձեռքէն, որ մուծած է յաւելուած Անկիւրիայի ԺԴ. կանոնին մէջ, բացատրելու համար «քորեպիսկոպոս» բառը. «Քորեպիսկոպոսաց մի լիցի երիցունս կամ սարկաւազունս օժանել...: Քանզի յայնժամ ի գաւառս լինէին եպիսկոպոսունք այս ինքն ի գիւղս. զայնպիսին կոչէ բորեպիսկոպոսս. զի որ եպիսկոպոսք տեսուչ գաւառի անի ըստ հոռոմին առ մեծամեծօֆն՝ այս ինքն որ զգաղափսն ունին, առ նոքօք կոչին

սոքա գաւառաց եպիսկոպոսք (Վիեննայի Թ. 810):

Հեղինակը կը յիշէ անգամ մը «գլատաբաղամատուցացն սարսափելի խորհուրդը» (821): Իր գործածած Պատարագամատոյցն է «Աթանասի» կոչուածը, Հայոց քով ընդունուած, ըստ Հ. Յ. Գաթրըճեանի, 490ին: Այս պատարագամատոյցէն է տեղիքս. «Որ միշտ անձախապէս բաշխի ի մեզ» (էջ 108)²⁷: Հ. Յ. Գաթրըճեան կը գրէ առ այս. «Զ. դարուն առաջին տասնեակները շինուած Սահակայ Կանոնաց մէջ ո՞վ չի համարիր անտարակուսելի անոր սուտ անուան ապացոյց մ'աւելի՜ երբ որ կը կարդանք յիշեալ տեղիքը» (անդ, էջ 323): Ասկէ են նաեւ սարսափելի եւ աստուածընկալ բառերը:

9. Ինչ ինչ ասութիւններ, բառեր եւ ըմբռնումներ, որոնք յատուկ են այս Ա.—Դ. հատուածներուն, կը նկատեմ նաեւ Վրթանէս Բերդոզի գրուածքներու մէջ, որ Զ. դարու վերջին եւ է. դարու առաջին քառորդին կը գործէր Դունոյ Հայրապետանոցին մէջ, թէ իբրեւ բարտուղար Մովսէս եւ Աբրահամ կաթողիկոսներու եւ թէ իբրեւ տեղապահ 604—608 տարիներուն: Վրթանէս ունեցած է իր ձեռքը Հայոց Կանոնագիրքը եւ յաճախ կոչումներ ըրած անկէ:

ա. «Երիցս երանեալ քաջ նահատակն Գրիստոսի Գրիգորիոս» (107): Անգամ մը նաեւ Զ. հատուածին մէջ. «Ի նահատակէն Տեառնէ Գրիգորէ» (115): — Վրթանէս կը գրէ. «Երանելի նահատակն Գրիստոսի եւ հայր մեր Գրիգորիոս» (93), «յանզանդիտող եւ ի քաջ նահատակէն տեսնէ Գրիգորէ» (112, 113, 138):

բ. Սահմանադրութիւն բառը, որչափ ծանօթ է ինձ, եկեղեցական-իրաւագիտական լեզուի մէջ առաջին անգամ ա՛յս տեղ կը կիրարկուի. «ըստ կանոնական սահմանադրու-

²⁶ Հմմտ. էջ 91 «զի պաշտամունք տուրնջեան եւ զիշերոյ մի խափանեցին»:

²⁷ Հմմտ. Սրբազան Պատարագամատոյցը Հայոց, էջ 281. «Եւ նոյն ինքը բաշխի ի միջի մերում (Լամբր. «Ի մեզ») միշտ անձախապէս»:

թեանց» (83), «զկարգեալ սահմանադրութիւնս», «այս սահմանադրութիւն կարգաց» (83) եւն: Անդամ մը միայն կը գտնենք հնազոյն աստեթեան ձեւս. «սահմանս այս կանոնականս» (76): Վրթանէս ունի. «Նիկիական սահմանադրութիւն» (119, 120, 142, 143), Սահմանադրութիւն Ժողովոյն Քաղկեդոնի (120, 141), սահմանադրութիւնս առնել հաւատոյ» (95): Այսպէս նաեւ Նիկիոյ Ժողովոյն կանոններու Յառաջարանին մէջ հին հաւաքողի կամ Յովհ. Օմնեցոյ ձեռքէն. «հասանէին ի դումարութիւն եւ ի սահմանադրութիւն» (Վիեննայի Թ. 810, Թղ. 33ա):

գ. Բառերս, հարուարէս ուրիշ գրուածքներու մէջ, կ'երեւան երկու հեղինակներուս ալ գրչի տակ. Աղծապիղծ, 74, 85 = 121, 165: Անդրդուելի, 83 = 197: Աստուածընկալ, 72, 81 = 94, 202: Նաեւ Նիկ. Ժող. Յառաջարանին մէջ եւ Ազաթ. 284 (խմբագրէն): Բարգաւաճեալ, 85 = 135: Բոնադատութիւն, 96 = 147: Լըջմտութիւն, 98 = 112: Խոշտանգանք, 84 = 94: Համառօտել, 82 = 97: Հրաշալի, 104 = 123, 142: Ճոռոմաբանեմ, 75 = 97: Նորաձեւութիւն, 82 = Նորաձեւ, նորոգաձեւութիւն, նորաձեւութիւն, 93, 94, 136, 138 եւն: Ձուրի, 78 = 144: Սահման կանոնական, 76 = 146: Սարսափելի, 82 = 144: Քստմնելի, 74 = 145:

դ. Բ. հատուածն ունի հետեւեալ տեղիքը. «Իսկ զպոռնկորդիս եւ որ յերկրորդացն են հաւասար մինչեւ յերկրորդ (կարգա՛ յերրորդ) ծնունդն, ըստ առաջին կանոնաց, հեռի կացցեն ի կարգէն եւ ի շնորհացն. զի պարկէշտ եւ սուրբ եւ աներկեւան եղիցի ուխտ պաշտօնէից Աստուծոյ...: Ձի Թէ Ղեւտական ազգն այնպիսի պատուէր ընկալաւ սոսկալի եւ զգուշաւոր անարատ սպասուորութեան, որչափ եւս առաւել այժմուքս են արժանաւոր փութոյ ըստ Պաւղոսի վկայութեան» (84): Այս տեղ հեղինակը աչքի առջեւ ունեցած է Բ. Օրէնք ԻԳ. 2, 7—8. «Մի մտցէ պոռնկորդի յեկեղեցի Աստուծոյ... մի գարչեցուցանիցես զեզիպտացին... եթէ լինիցին նորա որդիք՝ յերրորդ ազգի՝ մտցեն յեկեղեցի Տեառն»:

Ուշագրաւ է այն պարագան, որ նոյն իմաստ կանոն մ'ալ կցուած է Առաքելոց Վարդապետութեան ԺԲ. կանոնին յաւելուածով:

քիւրքն եւ եղին հաստատութեամբ, եթէ եկամուտ ոք կամ բնակաւոր, որ ոչ գիտէ զհաւատս ճշմարիտ եկեղեցոյ սրբոյ... մի լիցի առաջնորդ եւ հրամանատար յեկեղեցուոջ. եւ մի ոք կարգեսցէ զայնպիսիսն: [Չպոռնկեալսն, զչնացեալսն եւ զայլազործսն յերիցութիւն կամ ի սարկաւազութիւն եւ կամ յայլ ինչ սպասուորութիւն եկեղեցոյ մի մերձեցուցեն, զի մի կարգեալքն ընդ նորաք թիւրեսցին: Ձի եթէ սուրբը հանդերձեցոցն Մովսիսի զանարատն ընտրէր ի սպասուորութիւն խորանին, ո՛րչափ եւս առաւել որ նորոյ ուխտիս է միջնորդ»²⁸]:

Վերջին երեք տողերը կրկնուած նաեւ ԻԱ. կանոնին մէջ. «Ձի եթէ զՂեւտացիսն յամենայն իմեքէ... հեռացուցեալ՝ ապա մերձեցուցանէր առ ինքն, որչափ եւս առաւել որ նորոյ ուխտիս են սպասուորք, միջնորդք եւ պաշտօնեայք Քրիստոսի անարատք իցեն եւ անմեղք» (319—320):

Այս յաւելուածական մասը սերտիւ կապ ունի վերոյիշեալ կանոնին վերջաւորութեան հետ: Ո՞վ է այս յաւելուածը մուծողը: Հ. Յ. Տաշեան կը համարի Հ. Գաթրճեանի հետ, թէ ան ապրած է Ե. գարուն վերջերը: Ինձ շատ կանուխ կ'երեւայ այս եղբը: Առաքելոց Վարդապետութեան այս խմբագիրը խմբագրած է նաեւ ուրիշ ընդհանուր եւ մասնաւոր Ժողովներու, նոյն իսկ Շահապիվանի Ժողովին կանոնները փոփոխութիւններով եւ յաւելուածներով²⁹: Առանց տարակուսի նոյն ձեռքը գործած է նաեւ այս Սահակի ընծայուած կանոններու մէջ: «Ձի թէ Ղեւտական ազգն...» տողերը կարող են թէ յետսամուտ ըլլալ եւ թէ հեղինակի ձեռքէն յորինուած: Այն պարագան, որ «Առաջին կանոնք» հոս մեկնաբանուած է «Ձի թէ Ղեւտական ազգն», ենթադրել կու տայ որ կանոնին հեղինակն է առաջին եւ երկրորդ մասերու գրիչը: Վերջաւորութիւնը «ըստ Պաւղոսի վկայութեան» կ'ենթադրէ Երբ. Թ. 15 «որ նորոյ ուխտիս է միջնորդ», ինչպէս ունի Վարդ. Առաք. յաւելուածը:

Ուշագրութեան արժանի է այս տեսակէտով նաեւ նոյն Վրթանէս Քերդողի տեղիքս. «Վասն զի հին օրէնքն զսուրբ սեղանն յաղագս անշարժութեան հողեղէն հրամայեցին առնել եւ ի քարանց անշարժից... ուր

²⁸ Հ. Յ. Տաշեան, Վարդապետութիւն Առաքելոց, Կեննա 1896, էջ 309—310: ²⁹ Անդ, էջ 204:



աղջակէզքն եւ զո՛հքն մատչէին: Որչափ եւս առաւել որ նորոյ ուխտիս է միջնորդն կենդանարար եւ ազատիչ պատուական մարմնոյ եւ արեանն Տեառն յանշարժ եւ հաստատուն սեղան ելանել: Վասն որոյ եւ կարգեցին իսկ առաքեալքն եւ հաստատեցին ընդհանուր ի սուրբ եկեղեցիս եւ ճշմարտեցին սուրբ սեղան տէրունեան եւ աւագան մկրտութեան, որով արժանաւորիլ որդեգրութեան շնորհին» (Գիրք Թղթոց, էջ 125—126):

Վրթանէսի «կարգեցին առաքեալքն եւ հաստատեցին» յայտնապէս ցոյց կու տայ, թէ նա ունի ձեռքին տակ Առաքելոց Վարդապետութիւնը: Դարձեալ իր «կենդանաւրար եւ ազատիչ պատուական մարմնոյ եւ արեան Տեառն» արտայայտութիւնը կը յիշենք Սահակի ընծայուած Ա. հատուածին տեղիքս. «մեծարել զաստուածընկալ սեղանն յորոյ վերայ կատարի կենդանարար խորհուրդն ապրեցուցչին մերոյ Տեառն (էջ 72): Բայց ամէնէն աւելի ուշագրաւ է անարատ բառին յաճախ կրկնութիւնը մասնաւոր շեշտով, թէ՛ Սահակի կանոնին, թէ՛ Առաքելոց վարդապետութեան եւ թէ Շահապիվանի կանոններու մէջ մուծուած յաւելուածական կտորներու մէջ, որոնցմէ մաս մը վերը յառաջ բերուած կոչումներուն մէջ տեսանք արդէն.

ա. Սահակ. «Ձի թէ Ղեւտական ազգն այնպիսի պատուէր ընկալաւ... անարատ սպասուորութեան» (84):

բ. Վարդ. Առաք. ԺԲ. «զանարատն ընտրէր ի սպասուորութիւն խորանին...»: ԻԱ. «որչափ եւս առաւել որ նորոյ ուխտիս են սպասուորք... անարատ իցեն եւ անմեղք»:

գ. Շահապիվանի կան. Բ. «Ձի եկեղեցի զսուրբ կամի, մանաւանդ տէրունական սեղանն խորհրդոյ զանարատսն ընդունի»: Կան. ԺԳ. «Ձի սուրբ եկեղեցի եւ սուրբ խորհուրդն տէրունական զանարատսն ընդունի. զի արատաւորքն ի ձեռն անարատիցն փրկեցցին»: Կան. ԺԵ. «ի ձեռն անարատից մեղաւորքն սրբեցցին»:

Նաեւ այս տեղ մէկ միտք կը նկատուի, որ գիտէ մի եւ նոյն իմաստը այլ եւ այլ գարձուածքներով արտայայտել: Այս տեսակէտով նկատի առնելով նաեւ «ըստ առաջին կանոնաց» իրաւագիտական աստեթիւնը, զոր կիրարկած էին «Սահակ» եւ Վրթանէս,

ուշագիր կ'ընեմ որ նոյնը կը գտնենք նաեւ Անկիւրայի Ժողովի Թ. կանոնին մէջ, որ ամբողջութեամբ հայ խմբագրէն յորինուած է, եւ Կեսարիայի Ե. Բ. եւ Ժ. կանոններու մէջ, իբրեւ յաւելուած հայ խմբագրին: Այս տեղիքներն են. Անկ. Թ. «վասն այնոցիկ որ ինքեանք չհեռացան ի զոհելոյ կողմ...: Արդ զայնպիսիսն առաջին կանոնքն սպանանել հրամայեն. այլ երկրորդս կամ եղեւ մեծ Ժողովոյն միաբանութեան ընդդէմ երթալ տէրունական հրամանին...»: Կես. Ե. «Առաջին կանոնքն». Բ. «զայնպիսիսն առաջին կանոնքն եւ Գիրն չապրեցուցանէ». Ժ. «զայնպիսիսն Օրէնքն եւ առաջին կանոնքն սպանանել հրաման ետուն (ըստ Վիեննայի Թ. 810ի): Առանց տարակուսի մի եւ նոյն զրչէն կը բղխեն այս հինգ համիմաստ կոչումները:

Չեմ ուզեր ի վերջոյ անտեսելով անցնիլ «զի եթէ... որչափ եւս առաւել» շարկապի բովէն, որ այնքան յաճախ կրկնուեցաւ վերագոյն յառաջ բերուած վկայութիւններու մէջ: Այս ձեւին կը պատահիմ նաեւ Գրիգորի վարդապետութեան մէջ առ Ազաթանգեղոսի, յատկապէս այն հատուածներու մէջ, որոնք խմբագրէն են. «Ձի եթէ ամպք որ սպասուորք են... զարարչին հրամանս կատարեն... որչափ եւս առաւել այս վկայքս» եւն (էջ 283—284). «Իսկ արդ (եթէ) որք անդոսնեցին զճառայն Աստուծոյ զՄովսէս այնպիսի պատուհասի եղեն արժանի... իսկ որք իշխեցին... որպիսի լինիցին պատժոց պատուհասից արժանի... զի (եթէ) նոքա... իսկ որք... որչափ եւս առաւել լինիցին զիպեալք տանջանաց» (289):

Սահակի կանոններու եւ Ազաթանգեղոսի մէջ նմանութեան կէտեր կան. հատ մը տեսանք վերագոյն: Կը յիշեմ հոս ուրիշ մ'ալ «Հատ գրատալիքն եւ հաստատեաց. ասէ. Որ զձեզ ընդունի, զիս ընդունի» (Ազ. 289) = կանոնք 86. «Մովսէս կացոյց ոստիկանս ի վերայ Ժողովրդեանն քննել եւ զատալճիս հատանել»: Բառս սիրելի է Եփրեմի եւ Չոօնի թարգմանիչներուն. «հատ եւ գրատալիքն մահու եւ ի վերայ որդւոյն» (Եփրեմ Ա. 311—312). այլուր «անլոյծ դնել ի վերայ քո» (Ա. 374), «ածէ ի վերայ ձեր զոհն չարեացն» (Ա. 321). «Ինչք զոհն բարկութեան ի վերայ արքային»

(Ա. 396). «Եղ ի վերայ նորա զըն մահու» (Ա. 447). Եկն դն (473). ի վերայ Դաւթի ետ զըն» (Ա. 473) եւ այլն: Կը յուսամ այլուր աւելի ի մերձուտ քննութեան առնել Ազգաթանգեղոսի խմբագրին լեզուն եւ զայն համեմատութեան դնել այլ խմբագիր գրուածքներու հետ:

Վրթանէս Բերդոզ վերոյիշեալ հատուածին մէջ խօսք կ'ընէ նաեւ Մատուռներու մասին այսպէս. «Ի քաղաքս եւ յաւանս եւ ի գեօղս եւ յազարակս եւ յանդաստան ուրեք, ի վանորայս կուսանաց. այլ ոչ եթէ ուր եւ պէտ յամայի վայրս մատրուսն անուանեալ (ա)լ, ուր ոչ հանապազորդելոյ (°) եւ սրբութիւն պաշտաման կատարեսցի, յազարս որովայնապարարութեան ուխտ անուանեալ. եւ երթեալ կիսարան ինչ տարեալ եւ կամ քար ինչ կանգնեալ՝ զարդարեալ կտաւովք եւ ի վերայ զահեղ խորհուրդն տէրունեան կատարեալ»: (Գիրք Թղթոց, էջ 125—126):

Այս տողերուն հետ հեռուոր դարձաբանակցութիւն մը կ'երեւցնէ Գ. հատուածին տեղիքս. «Յայտ արարաք թէ զի՞նչ է եկեղեցի. այլ ոչ եթէ արհամարհել ինչ ուսուցանեմք զչինուածովք պատուեալ տեղին, որ անուանին ժողովրդանոցք, քանզի ի նոսա ժողովին քահանայք եւ մանկունք ուխտի եւ պաշտօնեայք Աստուծոյ կատարել զաղօթս... վասն որոյ եւ Աղօթարանք կոչին եւ Սրբարանք. եւ հաստատեալ կայ ի նոսա տէրունական սեղանն յորոյ վերայ զհացն եւ զգինին պատարագեմք յօրինակ կենդանարար մարմնոյ եւ արեան Քրիստոսի... եւ ի նոսա կայ ուղղեալ աւազան մկրտութեան, որով լուսաւորեալ վերստին ծննդեմք Հոգևոյն սրբով՝ զըրջմիք ի յոյսն կենացն յաւիտենականաց...: Եւ քանզի բազումք այսպէս կան վկայարանք ուրեք ուրեք՝ յանուանէն ճանաչեմք... եւ մի պատիւ է ամենեցուն զի մի խորհուրդ կատարի. քանզի սեղանն ամենայն ուրեք տէրունական ասի եւ պատարագն. զի իւրաքանչիւր տեղու յովորութիւն է կատարել զկարգ տօնիցն» (էջ 105—107): «Նոյնպէս եւ ժողովրդանոցք եւ Մատրուք, զոր սովորութիւն եղեւ ի վաղնջուց հետէ կոչել եկեղեցիս. թէպէտ եւ բազում է ըստ զիւրից գիւղից եւ քաղաքաց քաղաքաց, սակայն ոչ են բազումք ի բազումս բաժանեալ. այլ մի եւ նոյն խորհուրդ կատարի յամենե-

սին. եւ ըստ խորհուրդոցն ոչ ասի ոմն մեծ ի նոսա եւ ոմն փոքր, այլ ըստ աստիճանին ի խանութեան» (109—110):

10. Կանոնական Թուղթ Վարդապետացն Հայոց: Ե. հատուածն է այս Սահակի ընծայուած Կանոններու, որուն Յովհ. Օձնեցի իր Հաւաքման մէջ Բ. տեղը յատկացուցած է (Սովերք, 88—99): Կանոնագրքի Բ. խումբի մէջ ներս չէ առնուած ան: Թէպէտ Յովհ. Օձնեցի խորագրած է զայն «Նորին Կարգք Քահանայից առ ժողովրդականս» եւն, բայց ընդհանուր բովանդակութեան աւելի համապատասխան է «Կանոնական Թուղթ Վարդապետացն Հայոց». զոր իբրեւ խորագիր դրած է էջմ. 659, առանց «Նորին» կամ Սահակի անուան: Իրօք ալ «Կանոնական Թուղթս» բոլորովին անման է իր ներքին եւ արտաքին ձևով այն Ա.—Գ. հատուածներուն, որոնք, ինչպէս տեսանք, հովուական թուղթերու նկարագիրն ունէին: Մենք կը տեսնենք այստեղ անձուկ իմաստով «Կանոնական Թուղթ», որ ունի Յառաջարանական մուտք եւ Ա.—ԻԳ կանոնական սահմաններ, սահմանուած ամուսնացեալ քահանայից համար: Ուղղուած է խօսքը «Եղբարց սիրելեաց Երիցանց եւ Վանականաց»: Վերջիններուս կը հայի յատկապէս ԻԳ. կանոնը:

Յառաջարանական մուտքին մէջ կ'ըսուի. «Որպէս ամբաստանութիւն եղեւ առ մեզ ի բազում տեղիս (ի) ժողովրդականաց զքահանայից» (88). այս ինքն աշխարհականները ամբաստանութիւն ներկայացուցած են ամուսնացեալ քահանաներու մասին «ի բազում տեղիս» գտնուած վարդապետներու: Անոնք այժմ հաւաքուած են ժողովի այդ ամբաստանութիւնները քննութեան առնելու: Այդ ամբաստանութիւններն են.

ա. «Թէ որպէս ծուլութեամբ ունին զկարգ եկեղեցւոյ պաշտամանս եւ աղօթից եւ զայլ ամենայն կարեւոր առաջնորդութիւն:

բ. Ձի ինքեանք չեն ուսեալ. եւ զորդիս իւրեանց ի զպրոց ոչ ունին. եւ (որդիք) վասն տգիտութեան՝ երիցութեան արժանի ոչ լինին:

գ. Եւ մեզ զրկանք են եւ նեղութիւն զի դատարկացեալ եմք ե՛ւ նոքօք ե՛ւ ի նոցանէ, եւ խոպանացեալ եմք յամենայնի եւ ամենեւին անտեղեակ եւ անմխիթար (ի) զբոց սրբոց» (88—89):

Այս ամբաստանութիւնները կը ճշմարտեն ժողովական Հարք. «զնոյն զոր լուաք ի

նոցանէ՝ զիտացաք եւ մեք եւ սգացաք բազում տրտմութեամբ. վասն զի ի շատ տեղիս ոչ զոք դուք քահանայութեան արժանի (յորդուց քահանայից) ի տգիտութենէ»: Այս պատճառաւ ալ, կ'ըսեն, «հրաժարեցուցեալ զնոսա (զժառանգս) ի բնակութենէ՝ օտարաց պիտանեաց եւ զխնոց տուաք զժառանգութիւն նոցա» (89):

Այս կանոնները դրուած են ժողովականներու կողմէ յոգնակի առաջին դէմքով (Կան. ԺԶ, էջ 96 «այա թէ լսեմ») կարգալու է «լսեմք»):

Կան այս տեղ կանոններ, որոնք առնուած են Ներսէս Աշտարակեցւոյ (547—557) Կանոններէն, երբեմն բառական իսկ³⁰: Ասոնք են հետեւեալները.

Կանոնք Ներսիսի	Թուղթ Կանոնական
Ա.—Բ	Զ, ԺԹ
Գ.—Դ	ԺԸ
Ե	ԺԱ
Զ	Գ
Ը	Թ
ԺԳ	Է
ԺԴ	Գ
ԺԶ	Դ
ԺԷ	Ե
Ի	ԺԲ
ԻԳ	ԺԷ—ԺԸ
ԻԴ	ԺԵ

Համեմատութեան կը զնեմ ԺԶ., ԺԷ. եւ Ը. կանոնները.

Կանոնք Ներսիսի	Թուղթ Կանոնական
ԺԶ. Եւ կանայք առ քահանայս մի իշխեսցեն կալ, բայց սարկաւազունքն սպասաւորեսցեն. եւ կանայք յիւրեանց տեղին աղօթեսցեն. եւ մի կալ, որպէս սովորեցան եղիցին զորձակիցք քահանայիցն. որպէս լսեմք՝ վասն տգիտութեան՝ երիցութեան արժանի ոչ լինին:	Դ. Մկրտութիւն առնել երկուգործութեամբ. եւ կանայք ի ժամ մկրտութեան մերձ առ քահանայս մի իշխեսցեն սովորեցան մի իշխեսցեն կալ, որպէս սովորեցան ոմանք առնել յանդգնութեամբ քահանայիցն. որպէս լսեմք՝ վասն տգիտութեան՝ երիցութեան արժանի ոչ լինին:
Ը. Ձեկեղեցւոյ վարագոյր՝ առապատ տանց փեսայից եւ հարսանեաց	Թ. Եւ լսեմք թէ զեկեղեցւոյ տանց փեսայից եւ հարսանեաց

³⁰ Ձեմ կրնար համեմատելու Զ. Տաւանի, երբ «Սահակի» կանոններուս եւ Ն. Աշտարակեցւոյ կանոններու մէջ նկատուած յիշեալ նմանութիւնները բացատրելու համար կը կարծէ թէ Ներսիսի կանոնաց «մեծ մասն Սահակայ կանոններէն քաղուած է» (Վարդ. Առաք. 239. հմտ. նաեւ 217—218, 229):

(Կանոնք Ներսիսի)	(Թուղթ Կանոնական)
այլ մի իշխեսցեն առնել. զոր թէ գացի ոք արարեալ՝ թէ քահանայ՝ լուծցի, թէ զպիր՝ նոյն վեսցի:	առաջատի փեսայի եւ հարսին, եւ զսկիհն ի գինւրմով յանօթս տան զի նուորաց: Վասն որոյ արժան է զքահանայն զայն խել ի կարգէն իւրմէ վասն այդպիսի խառնակ եւ շար գործոց. զոր յայտ հետէ այլ մի ոք իշխեսցէ առնել. իսկ եթէ ոք գացի արարեալ, լուծեալ լիցի ի քահանայութենէն, ամենեւին անմասն ի թողութենէ:

Օգտագործուած են Կանոններուս մէջ նաեւ Բարսղի «Կանոնք վասն պէսպէս եւ բիւրապատիկ ախտից»: Այսպէս ԺԵ. կանոնը, որ ընդհանրապէս Ներսէսի ԻԳ. կանոնին համաձայն խմբագրուած է, նկատի ունի նաեւ Բարսղի ՄԺԹ եւ ՄԻԱ կանոնները. համեմատութիւնն է հետեւեալը.

Կանոնք Ներսիսի ԻԳ.	Թուղթ Կանոնական ԺԵ—ԺԶ.
Տղայոց պսակ մի իշխեսցեն օրհնել. եւ մի կատարելոցն երկուցունց զմիմեանս տեսանելոյ. զի այսպիսեաց անժամ հարսանեաց զնացին փառս մահաբերք: Եւ ժողովրդականք զայսպիսի օրհնէք մինչեւ ի կատարանել. զի նոցունց իսկ է կորուստ:	Պատուէր արարէք նոցա, զի տղայոց կանայս մի խօսեսցին. եւ մի կատարելոցն առանց զիւրեարս տեսանելոյ միմեանց հաճութեամբ: Եւ դուք քահանայք, տղայոց ամենեւին իսկ պսակ մի օրհնէք մինչեւ ի կատարանել. զի նոցունց իսկ է մեանս չիցէ տեսեալ ի հաճոյս իւրեանց, պսակ մի իշխէք զնել առանց քննութեան եւ զնոսին ինքեանս հարցանելոյ. դուք է լուսադատութեամբ ծնողացն ահաբանելոյ. զուրեք լուսադատութեամբ ծնողացն ահաբանելոյ. զուրեք լուսադատութեամբ ծնողացն ահաբանելոյ. զուրեք լուսադատութեամբ ծնողացն ահաբանելոյ:

մի իշխէք զնել առանց քննութեան եւ զնոսին ինքեանս հարցանելոյ. դուք է լուսադատութեամբ ծնողացն ահաբանելոյ. զուրեք լուսադատութեամբ ծնողացն ահաբանելոյ. զուրեք լուսադատութեամբ ծնողացն ահաբանելոյ. զուրեք լուսադատութեամբ ծնողացն ահաբանելոյ:

ԿԱՆՈՆՔ ԲԱՐՍՂԻ
«ՄԺԹ. Տղայոց պսակ մի զիցէ քահանայն մինչեւ ի չափ հասանեն, զիւրեանց հաճոյսն իմանան: Եւ եթէ ոք յանդգնի՝ լուծցի ի քահանայութենէն. եւ ձ. դրամ տուգան տայցէ յեկեղեցին: Եւ տղայն ի չափ հասեալ ում կամ ի ամուսնացի:

զաւոր զհող եկեղեցւոյն, զոր տուեալ էր թա-
ղաւորին Տրդատայ առ մեծան Քրիզորի-
քահանայապետի ի սպաս պաշտաման եկե-
ղեցւոյն ընդ ամենայն երկիրն Հայոց: Զի
յեւթն հոգոյն զհինգն հատանէր (Պատ) յար-
քունիս, եւ զերկուսն միայն թողոյր, երկուս
հողս. եւ ըստ հոգոյն թողոյր երկուս երկուս
առ զիւր մի երէց եւ սարկաւազ. եւ զայն
ի սպասու կացուցանէր յիւր ի ծառայութիւն
զեղբարս եւ զորդիս երիցանցն եւ սարկաւա-
զացն»: Իրերը անշուշտ միւսանդամ նախ-
կին կարգերու վերադարձան, Պատի մահէն
ետքը: Եւ այս վիճակը շարունակուեցաւ
մինչեւ է. դար, երբ կը գրէր Ներսէս Գ. Շի-
նող 645ին ի Դուին դումարուած ժողովի
կանոններուն մէջ (Կան. Ե.). «Վասն շնորհի
եւ ժառանգութեան սահմանեցաք, թէ ի
սկզբանէ որպէս ի հրամանէ սրբոյն Քրիզորի-
քեան՝ նոյնպէս եղիցի. որոյ շատ է ժառան-
գութիւնն՝ զասն կերիցէ, որոյ սակաւ՝
զսակաւ կալցի. եւ մի ըստ ծխոց բաժանե-
ցեն զշնորհն³². զի ժառանգութիւն սրբոյ
եկեղեցւոյ իրբեւ զազատութիւն է, զոր երա-
նելոյն սրբոյն Քրիզորի եւ թաղաւորին մե-
րոյ Տրդատայ զատուցեալ են: Արդ իւրաքան-
չիւր զհարանց ժառանգութիւնն կալցեն եւ
սրբոյ եկեղեցւոյ պաշտամանն հպատակ կաց-
ցեն եւ վարդապետին ի հնազանդութեան ա-
մենայն յօժարութեամբ» (էջ 11—12): Տես
եւ Կանոն Թ. «Յրանելոյն Քրիզորի եւ
սրբոյն Տրդատայ զտուրք եկեղեցւոյ ման-
կուսն ընդ ազատաց տոհմին են կարգեալ. եւ
ազատ էին սրբոյ եկեղեցւոյ հող եւ ջուր»
(էջ 19):

Հին Ղեւտական Օրինաց մերձեցումը
հոյ եկեղեցական կարգերու (էջ 131—132)
առաջին անգամ այս տեղ ակնբախ ձեւով
երեւան կու գայ: Մատաղի օրէնքը կը ձեւա-
կերպուի: Աղբիւր ծառայած են առ այս
Ելից, ԻԹ. 22. Ղեւտականաց, է. 8, Իէ. 30
եւ Թուոց ԺԸ. գլուխները: Բայց նաեւ Կա-
նոնադիրքէն ինչ ինչ տեղիքներ օգտագոր-
ծուած են: Այսպէս ծանօթ է իրեն Կանոնա-
կան Թուղթն Վարդապետաց Հայոց. ասկէ
անուած է. «Եւ պատարագացն երախայրիք
ի գլխաւոր քահանային տունն երթիցէ յա-
մենայն ժողովրդականաց» (Սուր. 92). որ
հոս եղած է. «Եւ փրկութեան պատարագաց
երախայրիք երթիցեն ի վանս գլխաւոր քա-
հանային, այս ինքն եպիսկոպոսացն» (132):

³² Հմմտ. եւ Գ. 14 (97):

Հոն «գլխաւոր քահանայն» է այն երէցը, որ
կապուած է եկեղեցւոյն հետ եւ ունի իր ձեռ-
քին տակ ուրիշ երէցներ. հոս մեկնուած է
«եպիսկոպոս»: Կ'ըսուի «սոյնպէս եւ դուք
պարտիք հարկս հոգեւոր հարկել եպիսկո-
պոսացն, որք կոչին այցելուք. եւ նոքա մի
իշխեսցեն խորել, այլ հարկեսցին յաղքատս
սամենայն» (132): Այս տեղիքը կ'ենթադրէ
Ե. հատուածը. «Աստուծոյ են ինչքն. քանզի
իւր համարի զտուրսն մեր եւ ոչ մարդոյ ու-
մեք (իմացիր՝ ուրուք). բայց միայն պահա-
պան եւ վերակացու է եւ տեսուչ եպիսկո-
պոսն... զի գանձ աստուածային, որում տե-
սուչ եւ մատակարար կազմեցար, նեղելոց...
տուաւ ապաւինութիւն... բայց յայլ իրս ա-
մենեւին չէ իշխանութիւն ծախել» (119—
120):

Յանուն Քրիզորի միայն այս կարգա-
դրութիւնը յառաջ կը բերուի, զոր կը հաս-
տատէ Սահակ հետեւեալ տողերով. «Եւ արդ
այսպէս կարգեցաւ ի սրբոյն Քրիզորէ եւ ի
մէնջ հաստատեցի նմանապէս յամենայն
հաւատացեալս անշարժ աւանդութիւնն Սըր-
բոյն. եւ այնպէս յարմարեալ եւ բազում
փութով պարտ է ի նմին մշտնջենաւորել.
քանզի ոչ եթէ ի մարդկային կարծեաց է ձա-
ռեցեալ սահմանադրութիւնս, այլ յԱստուա-
ծաշունչ գրոց³³ երկրորդեցաւ ի մէնջ բացո-
րոշարար» (132—133 եւ 110): Այնուհետեւ
Սահակ նոր կանոններ կը սահմանադրէ,
ա. «Թէ որպէս պարտ է հատուցանել ի վանս
եւ կամ ամուսնացելոց քահանայից» վերոյի-
շեալ տուրքերն կամ հասերը (110—115,
133—134):

Սահակի այս որոշումները կատարուած
են հետեւողութեամբ Ներսէս Աշտարակեց-
ւոյ կանոններու. յառաջ կը բերեմ օրի-
նակ մը.

Սահակ 133.	Ներսէս Աշտարակեցի. ԺԳ.
Ժողովրդականք ամե- նայն գլխուղ եւ գերե- խայրիս երիցանց մա- տուցեն անգեղաբար մտօ՛ւ...: Սոյնպէս եւ քահանային զամենայն նա- խադարգեալ հասս հա- տուցեն եպիսկոպոսաց առանց յապաղանաց. եւ մի անկցին ի հեղութիւն,	եւ ժողովրդականք մի հրապուրեացին ի նոցանէ ի բաժանումն սրբոյ եկե- ղեցւոյ. զի պատճառ խոռ- մտօ՛ւ...: Այլ գլխուղս եւ գլխուղս ժո- ղովրդականք միարանու- թեամբ ի տուրք եկեղեցի հատուցեն ամենայն յօ- մի անկցին ի հեղութիւն, ժարութեամբ անխափան.

³³ Կ'ակնարկուին անշուշտ Ելից եւ Ղեւտական
Գրքերը:

(Սահակ 133). (Ներսէս Աշտարակեցի).
մանաւանդ յախշտակել եւ մի ըստ դասուց բաժին
հնարելով զաւանդ վիճա- եւ երգուց, որ եղեւ
կելոցն...: Տղէտք ոմանք զլաս. եւ քահանայից ա-
ըստ սովորութեան մի՛ ռեալ ի սրբոյ եկեղեցւոյ
եղիցին արժանի առնուլ բաժանեցեն կարգաւ-
հասս մտից, այլ ուսմանց բարբր, որպէս օրէն է³⁴.
պարապեալքն եւ շնորհի գլխաւոր քահանայիցն եր-
քահանայութեան արժա- կուս մասունս եւ կէս մա-
նացեալ՝ նոքա եղիցին սին. եւ այլ քահանայքն
արժանի հասից: Եւ զպիթ մէն մի երկուս մասունս.
զբարկարացք սրբանեալք եւ սարկաւազունք մի
ամենայն պարկեշտու- մասն եւ կէս մասին. եւ
թեամբ՝ մի զրկեսցին ի զպիթն եւ այրի կանայքն
բաժնէ իւրեանց...: Իսկ թէ իցեն պարկեշտօ՛ւ՝ մի
կանայք երիցանցն այրիք մասն առանց հակառա-
մնացեալքն եւ սրբու- կութեան...:
թեամբ պարկեշտացեալք՝
արժանի եղիցին մասին
իւրեանց ըստ արժանաւո-
րութեան հասին սեղանոյ
եւ նուիրականաց ոմանց:

Ներսէսի ԼԵ. Կանոնը կ'ակնարկէ Սահակ,
երբ կը գրէ. «Քահանայից թէպէտ եւ ամուս-
նացեալք իցեն եւ արեղայից եւ ամենայն
ուխտի մանկանց չէ արժան ի չէնս օթել, այլ
ի վանս. բայց եթէ ուր ոչն գուցեն» (էջ 112):
Առ այս Ներսէս կը սահմանէ. «Մոնոգոնք եւ
վանաց մանկունք վանս մի ոք իշխեսցեն ու-
նել բայց ի վանս. ապա եթէ վանք ոչ իցէ,
յաւազ երիցուն տուն երթիցեն. զի չէ իշխա-
նութիւն յայլ տան օթել. եւ մի լիցի ի լսել,
թէ մի վանք, բազում վանք. որ ոչ է այս
հասարակ ըստ առաքելոցն կարգի»: Մոնո-
գոններու եւ վանականներու համար սահ-
մանուած կարգը մերձեցուած է նաեւ ա-
մուսնացեալ քահանաներու:

Բայց հետեւեալ տեղիքը Զ. հատուա-
ծին մէջ կ'երեւայ թէ Ե. հատուածն՝
Թուղթն Վարդապետաց Հայոց նկատի ունի.
«Բայց երկկանայքն որ ամենեւին զցանկու-
թեան մարմնոյ զհետ չողան, նոքա ոչ ունին
մասնաւորել շնորհի սրբութեանց» (133):
մասնաւորել շնորհի սրբութեանց = Երկկանայք երէց եղբարք ընդ զինուորս
կայցեն որոշեալ ամենեւին յեկեղեցականաց

³⁴ Ներսէս Բ. ի այս կանոնը կ'ակնարկէ «Կանոնա-
կան Թուղթ Վարդապետացն Հայոց» երբ կը սահմանէ
«Զպատուս գնախնեաց կարգեալս եւ զամենայն ընծայս
նոխտից [զատկաց եւ ազատաց եւ զայլոց տօնից] ժո-
ղովրդականք սիրով եւ լրջմտութեամբ հատուցեն
յիկեղեցիս եւ ի վանս որպէս օրէն է» (էջ 98): Ան-
կանաւոր փակագծի մէջ առնուած «զատկաց եւ ազա-
տաց եւ զայլոց տօնից» հասկանալու աւելցուած է Յովհ.
Օճնեցիէն իբրեւ բացատրութիւն. յեղած Գրիգոր-Սա-
հակեան Սահմանադրութեան վրայ:

եւ ի մասնէ եկեղեցւոյն, վասն զի եղեն
մարմնասէրք» (94): Իսկ Ներսէս Աշտարա-
կեցի Կան. Ե. կը սահմանէ «Եւ երկկանայք
թէեւ զբարկարացք իցեն եւ պաշտօնեայք՝
ընդ զինուորս կացցեն վասն ուխտագանցու-
թեան. եւ ի պտոյց եւ ի մտից սրբոյ եկե-
ղեցւոյ եւ ոչ միում մասին արժանի լիցին»:

Շատերու ուշադրութիւնը գրաւած է
արդէն այն Տօնացանկը զոր կազմած է Կա-
նոններու խմբագիրը, մատաղի եւ առ հա-
սարակ տուրքերու բաժանումի համար: Տօ-
նացանկս, որ նկատի ունի Հայոց եկեղեցա-
կան տարին իր ամբողջական շրջանին մէջ,
քննութեան պիտի առնեմ առանձին ուսում-
նասիրութեամբ մը:

Թէ գրուածքս Զ. դարէն ետքը յօրի-
նուած է, ցոյց կու տան ոչ միայն Ներսէս Բ.
Աշտարակեցւոյ կանոնները, որոնցմէ օղ-
տուած է, այլ եւ ինչ ինչ տօներու (Մաղկա-
զարդի, Վարդապետի, Տեառնընդառաջի եւ
Աստուածածնի) յիշատակութիւնք, տօներ
որոնք յընթացս Զ. դարու մուտք գտան ա-
րեւելեան եկեղեցիներու մէջ: Գրուածքս
րեւելեան եկեղեցիներու մէջ: Գրուածքս
ծանօթ էր 605ին հրատարակ եկած Վար-
դապետական Թուղթին: Այս տարին կրնանք
զրուածքիս առաջին եզրը նկատել, որմէ
զրուածքիս առաջին եզրը նկատել, որմէ
վերջը գրուած է: Անշուշտ պարզապէս ա-
մուսնացեալքն հետեւանք չենք կրնար հա-
նուադրութեան հետեւանք չենք կրնար հա-
մարել այն, որ հոս առանց յիշատակութեան
թողուած է Ս. Պաշի տօնը: Այս տօնը արե-
ւելեան եկեղեցւոյ մէջ հրամայեալ տօն հրո-
շակուեցաւ 630էն ետքը, երբ Ս. Պաշը գե-
րութեան ազատեցաւ եւ վերադարձաւ
րուստաղէմ: Նկատի առնենք եւ այն որ
Երուսաղէմ: Նկատի առնենք եւ այն որ
Յովհ. Օճնեցի թէեւ այս Զ. հատուածը
չէ հիւրընկալած իւր Հաւաքման մէջ, բայց
անոր դրութեան լաւ ծանօթ էր: Նա բաւա-
կանացած է հանել անկէ ընդարձակ հատուած
մը յիշատակարանին հետ միասին եւ ազու-
ցանել Գ. հատուածին մէջ. առանց այս մա-
սին բացատրութիւն տալու: Ուստի թէ հա-
տուածս կար հրատարակի վրայ Լ. դարէն
յառաջ, նոյն ինքն Յովհ. Օճնեցին վկայ է:
Բայց թէ նաեւ 645ին հրատարակի վրայ էր
ան, կ'երեւայ այն պարագայէն, որ Ներսէս
Գ. Շինող Դունոյ Ժողովոյն Կանոններու մէջ
կանախորհրդութիւն ունի զրուածքիս մասին:
Ուստի կրնանք վստահարար ըսել, թէ
պէտք է գրուած ըլլայ է. դարու առաջին
քառորդին:

Հ. Յ. Գաթրճեան, նկատի առնելով Ձ. հատուածն ինքն իր մէջ, այն չափով, որով պահուած է Կանոնագրքին մէջ, կը գրէ. «Ներքուստ ըստ նիւթոյն արժէք մը չունենալէն զատ՝ լեզուն ալ ան աստիճանի խեղճ է, որ եւ ոչ մէկալ հինգ նախընթաց կտորներուն լեզուն կրնայ հեռուանց իսկ համեմատուիլ: Յոյներէն ստիպուած զանազան զեղծամբ ապականած մատաղի սովորութիւնը արդարացնելու նպատակաւ չինուած կտոր մըն է, գուցէ նոյն իսկ թ. դարուն» (Ներածութիւն Հայոց Կանոնագրքի անտիպ):

Թէ զրուածքս կեղծիք մըն է Ս. Սահակի անուամբ, կը վկայէ նաեւ անոր լեզուն: Ոչ միայն թարգմանութիւն չէ այն, յունարենէ կամ որ եւ է ուրիշ լեզուէ «ի ձեռն Եզնակի», այլ եւ Ն. դարու հայերէնի կնիքը չունի: Թէպէտ թեթեւօրէն, բայց ենթարկուած է Յունարան Դպրոցի նորահար լեզուի ազդեցութեան. ունի Ձ. դարէն ետքը հայ լեզուի մէջ մուտ գտած նորարանութիւններ: Յանկ մը այդ բաներու բաւական է ցոյց տալու համար, թէ ան է. դարու ծնունդ է:

ՀԱՄԱԲԱՐՐԱՌ

Ամենարուական 116	Մարդկային 110
Անգղիշարար 133	Մերձակայ
Անթարգմանելի 116	Յարմարեմ 107, 116
Բարեբանեալ 114	Յարմարեմ 110
Բացորոշարար 110	Նախակարգեմ 110, 133
Գործականութիւն 129	Նախան 112
Ընծայաբերութիւն 130	Նորածեւեմ 115
Կարապետութիւն 116	Չափաւորացէս 129
Կենցաղ 128	Պատասխանեմ 126
Կոսմոլ 128	Սահմանադրեմ 110
Հարկաւորացէս 130	Սահմանադրութիւն 110, 115
Ճրագու 112	Սրբանեալ 133
Մասնաւորեմ 133, 134	Տախտ 112
Մատաղենիք 111, 113	

Այս «Գիր աւանդութեան» կամ «Սահմանադրութիւն կարգաց» գրութիւնը Յովհ. Օձնեցի իր Հաւաքումը կազմած ժամանակ (իր 720ին) ունէր իր ամբողջութեան մէջ: Թէպէտ զայն քաղուածարար միայն ներս առաւ իր Հաւաքումին մէջ, բայց կ'երեւայ թէ մնացած մասն ալ իրրեւ Յաւելուած կցեց իր աշխատութեան: Այսպէս պահուած է ան Կանոնագրքին մէջ, ուր կարգացած է զայն ներսէս Ենորհալի (+ 1173), եւ որմէ կոչուած մ'ալ յատաճ կը բերէ, աղբիւրը մատնանշելով. «Գրեալ է ի Կանոնական գիրս Ս. Սահակայ հայրապետի» (տես վերը § 5դ):

Նոյնպէս նաեւ Բարձրբերդցի Կոստանդին Ա. կաթողիկոս Գրիգորի Լուսաւորչի վաւերական որոշումը համարած է Ձ. հատուածս, իր առ Արեւելեան Վարդապետս գրած կանոններու մէջ, ուր կը կարգանք (Կան. ԻԳ). «Ձի սուրբ Լուսաւորչին գրեալ է որ Քահանայք զժողովուրդն տասանորդէ, եւ եպիսկոպոսն զքահանայն եւ հայրապետն զեպիսկոպոսունս» (Կիր. Գանձակեցի, էջ 172):

12. Այս տեղ պիտի ամփոփեմ այն մանր կանոնական գրուածքները, որոնք Ս. Սահակի անուամբ կը յիշուին Չեռագիրներու մէջ: Ասոնք ըստ մեծի մասին Կանոնագրքէն հանուած եւ աղճատուած հատակոտորներ են:

Ա. «Գիր եւ կանոնք Ս. Սահակայ վասն խողից սուրբ լինելոյ եւ հրաման տալոյ ուտելոյ հաւատացելոյ (Ձ. հաւատացեալ): Յորժամ ստեղծ արարիչն Աստուած...»: Այս հատուածը գտած եմ էջմիածնի թ. 652, 64բ ձեռագրին մէջ, գրուած ժ. Ն. դարուն: Դժբախտարար թերի մնացած է օրինակութիւնը:

Առանց տարակուսի այս ալ Սահակի ընծայուած Կանոնական գրութիւններէն է, այլուստ անձանօթ:

Բ. Յովհաննէս Երզնկացի իր «Սրատ հաւարակաց քրիստոնէից» գրուածքին մէջ շատ յաճախ կտորներ յառաջ կը բերէ Սահակի ընծայուած Ա.—Ձ հատուածներէն, տեղ տեղ քաղուածարար, նաեւ ընդլայնումով. ասոնց թուին մէջ են նաեւ հետեւեալները, որոնք ինքնուրոյն սկզբնաւորութիւններ ունին եւ կարող են հաւատք արթնցնել, թէ ինքնակաց կանոններ ըլլան.

ա. «Սահակայ կանոնք: Պարտ է քառասունք կատարել. մեռելոյն, զի առաքելական հրամանք է...: Այլ եւ մեռելին անկողինն եւ զհանդերձն ի վանքն եւ ի ձեր քահանայիցն յեկեղեցին տուք... եւ մեռելքն աղօթիցն եւ պատարագացն մասնակից լինին»: Քաղուածարար հանուած է Ձ. հատուածէն (Սոփերք էջ 112):

= Վիեննայի թ. 170, 107բ (Տաշեան, Յուցակ 485): էջմ. 228, 108բ (1457էն):

բ. Սահակայ վասն Քահանայից: Սորհրդական եւ նուէրք ամենայն եւ ընծայք զոր տան քահանայիցն. զոր ի հնուին Աստուած Մովսէսի հրամայեաց. զնոյն եւ սուրբն Գրիգոր սահմանեաց յորժամ գըրբմ—

արն կարգեաց ի քահանայութիւն...»: վ. «Ի յաճախումն ստացուածոց իւրեանց»: Քաղուածարար հանուած Ձ. հատուածէն (Սոփերք, էջ 129—132):

= Վիեննա, թ. 58, 372բ: 170, 107բ—108ա: 534, 81բ—82ա. Եւայլն:

գ. Ձի ի սուրբ հայրապետն Իսահակ կանոնեալ է. Տղայոցն հասակաւ պսակ մի գիւցեն քահանայքն (Վիեննա, թ. 58, 374բ եւ 354ա = Սոփերք, 95—96 (Կանոն ԺԵ): — «Եւ սուրբն Սահակ կանոնեալ է եւ զայս, եթէ Գինի ի լալիս մի ըմպեացեն...: Վիեննա, թ. 170, 107ա: 534, 80բ = Սոփ., էջ 98 (Կան. ԻԱ.): — Կանոնք սրբոյն Սահակայ Հայոց հայրապետին: Մկրտութիւն առնել երկիւղածութեամբ...: Վիեննա, թ. 134, 106ա=91 (Կան. Ե.): Կը լուծմ յիշել ուրիշները:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ՎԵՍՊՈՒՐԵԿԵՆ - ՎԵՆԻ ՎԵՆՔԵՐՈՒ ՄԵՍԻՆ ԸՆԳՀԵՆՈՒՐ՝ ԶՆԵՆՁԵՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Շարունակութիւն):

10. «ՄՈՒՏՔ Ի ՎԱՆՍ», ՎԱՆՔԻ ԱՆԿԱՄՆԵՐ ԵՒ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Վանքի մը անդամակցելու — անոր միարանն ըլլալու եւ հոն կրօնաւորելու — համար բնական պահանջ էր որ՝ հետամուտը սէր ու յարում ունենար — կոչուած զգար — այդ վանքի մէջ հետապնդուած նպատակին ձգտելու եւ այն տեղ տիրող կանոններու համեմատ իր օրն ու կեանքը ձեւելու:

Հարկաւ հայկական վանքերը ունէին որոշ չափանիշ ու կանոն հետամուտն ընդունելու եւ կրթելու: Այսպէս Սահակ Չորսփորեցի թող չի տար եպիսկոպոսին «կրօնաւորել սքեմաւորութեամբ եւ զիւր գործ թողուլ» (Ղլտճեան, Կան. Հայոց, էջ 131, Կան. Բ.): Նաեւ ուրուկին՝ բորոտին կ'արգիւնէ՝ «սքեմ առնուլ կրօնաւորութեան (անդ, էջ 132):

Մոնոզոն եւ կրօնաւոր յատուկ արարողութիւններ կային ըլլալու վանքերու մէջ:

Ս. Ղազարի մէջ կը գտնուի հին Մաշտոց մը²⁴, զոր Հ. Հայունին ժԱ. դարու արտադրութիւն կը համարի: Անոր մէջ կան՝ «Կանոն մոնոզոն առնել ըստ հերակտրութեան Եզիպտացոցն եւ սուրբ լերինն Պաղեստին արանց եւ կանա(ն)ց, որք զկուսութիւն յանձն առնուն ի Քրիստոս» եւ «Չեռնագրութիւն կրօնաւորութեան արժանացելոցն ի չափ հասակի կատարման տիրոցն եւ նմանակցութեան ի Քրիստոս մեռելոյն» (Քաղմաղէպ, 1923, էջ 46—47): «Ուտի եւ կան երկու կարգեր տուչութեան վանական կրկին աստիճանաց՝ մոնոզոնութեան եւ կրօնաւորութեան, որոնք իրարմէ կը տարբերին խտտակրօնաւորութեամբ եւ կը վերաբերին արանց եւ կանանց միանկրամայն» (անդ, էջ 46): Արդ՝ առաջին կանոնին համաձայն մոնոզոնութեան հետամուտը կամ նուիրեալը կը տանին եկեղեցոյ դուռը եւ ԻԳ. սաղմոսը կ'ըսեն: Յետոյ անոր զլուխը կը բանան, գօտելոյժ կ'ընեն եւ ձեռքերուն մէջ երկու մոմ կը դնեն: Ապա կը հրամայեն ծնրադրել եւ «Հարանց Հօր» կամ առաջնորդին պատասխանել թէ ինչո՞ւ մոնոզոն կ'ուզէ ըլլալ եւ թէ՛ ազատակամ է որ՝ մոնոզոնութիւն կ'ընտրէ: Բաւարար ու հաստատական պատասխանին վրայ՝ սաղմոսերգութեամբ մուտք կը գործուի եկեղեցի, ուր աղօթքներ կ'ըլլան ու նուիրեալին խրատ կը տրուի՝ մասնաւորապէս ընտանեկան կապէ հրաժարելու եւ ժուժկալութեան մասին: Որմէ յետոյ նա ինքնին առաջնորդին կը մատուցանէ մկրատը կամ կտորցը, որով անիկա անոր մաղբէն փունջ մը կը կտրէ: Ապա ուրիշ մէկը զանիկա առանձին տեղ մը մեկուսացնելով՝ զլիտն մագերը ամբողջութեամբ կը կտրէ՝ կը սափրէ: Ու վանական կամ կրօնաւորական զգեստ հագցուցած՝ կը ներկայացնէ առաջնորդին, որ արարողութիւնը կը շարունակէ՝ սաղմոսարարողութիւնը կը շարունակէ՝ անորմէնքով՝ ընթերցուածներով եւ աղօթքներով: Աւարտումէն յետոյ միարանները կ'ողջապուրեն իրենց նոր ընկերը, որ ութը օր գեւ եկեղեցի կը մնայ — աղօթաւոր (Քաղմ. 1923, էջ 46—47 հմմտ. նաեւ Հայունի Հ. Վ.,

²⁴ Միթթարեան Հայրերու այս օրինակին եւ կրօնաւոր ընկեր արարողութեան մասին հմմտ. Conybeare F., Rituale Armenorum, Oxford, 1905, էջ 136—137: Համանման օրինակ մը վատիկանի մէջ հմմտ. Tissierant E., Codices Armeni, Romae, 1927, էջ 80): — Արեղային քահանայական ձեռնագրութեան մէջ ալ որոշ տարբերութիւն կայ: Ամէնէն վերջ եպիսկոպոսը «Հանէ զքրօնն եւ ապա զգեցուցանէ զվեկորն» (Մեծ Մատոց, Կ. Գ. 1807, էջ 272—277):